# ՊԱՇՏՈՆԱԿԱՆ-Ք

## ԱՇԽԱՐՀԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ՊԻՏԻ ՆՇԵՆ «ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՕՐ»-Ը

Գոհունակությամբ տեղեկացնում ենք մեր ժողովրդի սիրեցյալ զավակներին, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միացյալ աշխատանքի շնորհիվ Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը որոշում է կայացրել Ապրիլի 24-ին հաջորդող Կիրակին իր անդամ ավելի քան 375 եկեղեցիներում նշել որպես «ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՕՐ»: Այդ օրը աշխարհի բոլոր ծագերում՝ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի անդամ բոլոր եկեղեցիներում հայ ժողովրդի նահատակության ու հարության հապուկ հիշատակություն կկատարվի Պատարագի ընթացքում:

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ
ԱՆԹԻԼԻԱՍ, ԼԻԲԱՆԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ